13. Таранов Г. Ф. Биологические и хозяйственные особенности серой высокогорной грузинской породы пчел, „Пчеловодство“, 1, 1951.
14. Таранов Г. Ф. Биологические и хозяйственные особенности серой высокогорной грузинской породы пчел, „Пчеловодство“, 2, 1951.
15. Филипп А. Об итальянских пчелах, „Пчеловодная жизнь“, 1914.

Համառոտ գիտական հաղորդումներ

Տ. Ա. ԱՍԽԱՆԳՈՒԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՏԵՐԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ԻՆՔՆԱՄԱՔՐՈՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԻ

Ինչպես հայտնի է, բաց ջրամբարները (գետեր, լճեր և այլն) բնակչության կողմից լայնորեն օգտագործվում են ջրամատակարարման և դաշնադան տնտեսական նպատակների համար: Բնակավայրերում կենցաղային, արդյունաբերական և այլ նպատակներով օգտագործված ջուրը, որպես կեղտաջուր, սովորաբար բաց է թողնվում ջրամբարները:

Այդ կապակցությամբ կարևոր հարցեր են ծագում ջրամբարները կեղտոտումից պահպանելու վերաբերյալ, որից մեծապես կախված են գետի տարրերի հատվածներում բնակչության ջրօգտագործման չափը և նրա բնույթը:

Ջրամբարների պահպանության ուղղված միջոցառումները հիմնավորված ձևով իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ինքնամաքրման պրոցեսները տվյալ ջրամբարում:

Հայտնի է, որ բաց ջրամբարներում ինքնամաքրման պրոցեսների մասնակ օրգանական նյութերը օքսիդանում և քայքայվում են, հիմնականում, բակտերիաների միջոցով:

Փորձերը ցույց են տվել, որ ջրամբարներում օրգանական նյութերի քայքայման կորագիծը բավական մոտ է բակտերիաների թվի նվազման կորագծին: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ բակտերիաների թիվը նվազագույնի է հասնում, մեծ քանակությամբ սննդանյութերի առկայության պայմաններում և հակառակը (Ս. Ն. Ստրոգանով [7], Ա. Ս. Կուտուևովա [3] և ուրիշներ):

Պարզված է, որ ջրամբարների բակտերիալ ինքնամաքրման պրոցեսի մասնակ կարևորագույն ազդակ է նաև առանձին բակտերիալ խմբերի միջև գոյություն ունեցող հակադրեցություներ (Լ. Գ. Պերետց և Կ. Գ. Մեդվինսկայա [5], Խ. Ն. Բլոխին [2], Յու. Ի. Այցինբուդ [1] և ուրիշներ):

Անհրաժեշտ է նշել, որ ջրում բակտերիաների կենսագործունեությունը նվիրված հետազոտական աշխատանքներից ստացված տվյալները բավական հակասական են և շատ դեպքերում միակողմանի են պարզաբանում բակտերիալ ինքնամաքրման հարցերը: Գրականությունը շատ աղքատ է հատկապես լեռնային գետերի բակտերիալ ինքնամաքրման վերաբերյալ տվյալներով: Բակ լեռնային գետերը (մասնավորապես փոքր կարողությամբ) իրենց հիդրոլոգիական առանձնահատկությունների շնորհիվ շատ բաներով են տարբերվում դանդաղահոս գետերից: Հենց այդ պատճառով էլ լեռնային գետերի ինքնամաքրման, մասնավորապես բակտերիաների ոչնչացման պրոցեսների ուսումնասիրությունն ունի նաև կարևոր տնտեսական նշանակություն: Այդ հարցի պարզաբանման է նվիրվել մեր ներկա աշխատությունը:

Որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրել էինք Ողջի գետը, որ տիպիկ լեռնային գետ է։ Նա մտնում է Արաքս գետի ավազանի մեջ, հանգիստանալով նրա ձախակողմյան վտակներից մեկը։ Հոսելով Ղափանի արգյունարերական շրջանով, Ողջի գետը անցնում է Աղբրեջանի սահմանը և մտնում է Ջանդիլանի երկար գաջար, ապա Մինջևան երկաթուղային կայարանից ցած թափվում է Արաքս գետը։ Ողջի գետի բակտերիալ կեղտոտման մասին տեղեկություններ և գլխավորապես բնական ինքնամաքրման պրոցեսն ուսումնասիրելու նպատակով մենք գետի երկարությամբ (51 կմ) 12 կետերից տարվա բոլոր եղանակներին վերցրել ենք ջրի բազմաթիվ նմուշներ և կատարել բակտերիոլոգիական ուսումնասիրություններ, որոշելով բակտերիաների ընդհանուր թիվը և աղիքային ցուպիկի քանակը։ Ընդամենը հետազոտության է ենթարկվել ջրի 94 նմուշ, որ ընդհանուր թվով կազմում է 184 որոշում։

Գետի այն հատվածը, որը գտնվում է բնակավայրերից վեր (այսինքն՝ երբ գետի ջուրը գտնվում է բնական վիճակում), չափազանց աղքատ է բակտերիաներով։ Այսպես՝ ջրում բոլոր սապրոֆիտների թիվը մերողջ հետազոտության ընթացքում 1 սմ³-ում եղել է 22—65-ի սահմաններում։ Աղիքային ցուպիկի թիվը մեկ լիտրում (կոլի ինդեքս) ձմռան ամիսներին եղել է 10—25, իսկ ամռան ամիսներին և գարնանային հորդումների ժամանակ բարձրանում է, հասնելով 1 լիտրում մինչև 2000։ Հետաքրքրական է նշել, որ այդ նույն ժամանակ սապրոֆիտների թիվը ջրում մեծ փոփոխությունների չի ենթարկվում։ Այդ հանդամանքը ցույց է տալիս, որ մասնավորապես այն ջրերը, որոնք ունեն աղիքային ցուպիկի բարձր տիտր (օրինակ՝ 40 կամ ավելի), աղիքային ցուպիկի տիտրի որոշումը կեղտոտման ավելի զգայուն ցուցանիշ է, քան բակտերիաների ընդհանուր թիվը։ Բակտերիաների ընդհանուր թվով Ողջի գետի ջուրը այս հատվածում բավարարում է նույնիսկ խմելու ջրի ստանդարտով առաջադրվող պահանջներին։ Բակտերիաների փոքր թիվը պայմանավորված է նրանով, որ այս հատվածից վեր չկան ջուրը կեղտոտող օբյեկտներ, իսկ իր բնական վիճակում Ողջի գետի ջուրը, ինչպես ցույց են տվել ֆիզիկո-քիմիական ուսումնասիրությունները, չափազանց աղքատ է բակտերիաների գոյության պահանջման համար անհրաժեշտ օրգանական նյութերով։

Աղյուսակ 1

Ողջի գետի բակտերիոլոգիական կազմը բնակավայրերից վեր հատվածում

Ցուցանիշներ	1 9 5 2 թ.						1953 թ.	
	2/VIII	6/VIII	1/X	31/XII	22/XII	28/XII	15/V	18/V
Բակտերիաների ընդհանուր թիվը 1 միլիլիտրում	65	54	42	43	39	41	39	22
Աղիքային ցուպիկի թիվը 1 լիտրում	1310	2000	357	25	12	10	200	142

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ բակտերիաների ընդհանուր թիվը (1 միլիլիտրում) գետի «ամաքուր» հատվածում կազմել է 22—65: Այս ուղղությամբ բազմաթիվ գետերի ուսումնասիրության տվյալները բավական հակասական են: Ս. Ն. Ստրոգանովը [7], ամփոփելով Միության 18 դանդաղահոս գետերի ուսումնասիրության տվյալները, նշել է, որ գետերն իրենց բնական վիճակում 1 միլիլիտր ջրում պարունակում են մոտ 2500 բակտերիա, որը և առաջարկում էր որպես գետերի ջրի «ամաքրության» ստանդարտ:

Ս. Ի. Ռեյխիլաձեի [6] տվյալներով, Քուռ գետն իր վերին հատվածում պարունակում է 186—675 բակտերիա (1 միլիլիտրում): Համեմատաբար ավելի պակաս է բակտերիաների ընդհանուր թիվը Հրադգան գետում: Երեվան քաղաքից վեր բակտերիաների թիվը 1 միլիլիտրում, միջին հաշվով, կազմում է 255 (Տ. Ա. Հովսեփյան [4]):

Այսպիսով՝ տարբեր գետեր իրենց «ամաքուր» հատվածներում պարունակում են տարբեր թվով բակտերիաներ: Այնուամենայնիվ պետք է նշել, որ Լեոնային գետերն իրենց բնական վիճակում, դանդաղահոս գետերի համեմատությամբ, բավական աղքատ են սապրոֆիտ բակտերիաներով:

Ս. Ի. Ռեյխիլաձեն [6], ելնելով Քուռ գետի ուսումնասիրություններից, առաջարկում է Լեոնային գետերի «ամաքրության» ստանդարտ, ընդ որում նա նորմալորման է ենթարկում նաև բակտերիաների ընդհանուր թիվը:

Մեր տվյալները ցույց են տալիս, որ բակտերիաների ընդհանուր թվի համար նրա առաջարկած նորման (1 սմ³-ում 500 բակտերիա) չի կարող ընդունելի լինել բոլոր արագահոս գետերի համար: Լեոնային գետերի «ամաքրության» ստանդարտի անհրաժեշտությունը հիմնավորելու և միասնական նորմաներ մշակելու համար դեռ չեն կուտակվել անհրաժեշտ քանակությամբ նյութեր: Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս բաց ջրամբարներում բակտերիաների ընդհանուր թվի համար սահմանային նորմա ՅՕՍՏ-ով չի ընդունված:

Այժմ քննության առնենք Ողջի գետի կեղտոտման և ինֆեկցիոն վնասվածության պատկերը:

Ողջի գետը, ինչպես նշեցինք, իր բնական վիճակում բավական աղքատ է բակտերիաներով, սակայն անցնելով Քաջարան և Ողջի բնակավայրերի մոտով, վերջիններիս կողմից կեղտոտվում է, այդ պատճառով նկատվում է բակտերիաների թվի զգալի ավելացում: Այդ հատվածում բակտերիաների ընդհանուր թիվը 1 սմ³-ում, միջին հաշվով, կազմում է 800, աղիքային ցուպիկների թիվը՝ 64: Ստորև բերվում են գետի այն հատվածի բակտերիոլոգիական ուսումնասիրության տվյալները, որը գտնվում է նըշված բնակավայրերից ցած:

Եթե բերված տվյալները համեմատենք Միության մեջ գետերի կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների տվյալների հետ (Ս. Ն. Ստրոգանով [7]), ապա դժվար չի լինի նկատել, որ Ողջի գետը բակտերիոլոգիական տեսակետից սեփեղ կերպով չի կեղտոտվում: Գետի կեղտոտումը օրգանական նյութերով նույնպես մեծ չէ: Այսպես՝ օրգանական նյութերի թթվիցման համար կլանվող թթվածնի քանակությունը (ՅՈՒՄ) բավական փոքր է (2,2 մգ/լ Օ₂):

Ա զ յ ու ա կ ջ

Ողջի գետի սանիտարա-բակտերիոլոգիական կազմը Քաջարանից ցած

Սուցանիշներ	1 9 3 2 թ.							1953 թ.
	19/IV	26/VII	11/VIII	20/IX	27/X	13/XI	22/XII	15/V
Բակտերիաների ընդհանուր թիվը 1 սմ ³ -ում	320	260	546	860	1120	934	487	285
Աղիքային ցուպիկ- ների թիվը 1 սմ ³ -ում	—	40	85	68	78	112	57	23

Ողջի գետի բակտերիոլոգիական կազմը Ողջի գյուղի մոտ (1952 թ.)

Սուցանիշներ	19/IV	6/VIII	11/VIII	20/IX	17/X	13/XI	22/XII
Բակտերիաների ընդհանուր թիվը 1 սմ ³ -ում	380	540	745	680	1452	1030	765
Աղիքային ցուպիկ- ների թիվը 1 սմ ³ -ում	—	53	37	52	85	78	61

Օխշի գյուղից ցած տեղի ունեն ինքնամաքրման պրոցեսներ, գետում
ևս օրգանական նյութերը, բակտերիաների կենսագործունեության հետևան-
քով քայքայվում են:


Ստորև բերված նկարը ցույց է տալիս բակտերիաների մահացման
դինամիկան Ողջի գետի ինքնամաքրման պրոցեսում (Քաջարան-Ղափան
հատվածում):

Նկարից երևում է, որ կեղտոտման վայրից ցած բակտերիաների թվի
նվազում անմիջապես տեղի չի ունենում: Սկզբնական շրջանում մինչև 4 կմ
հեռավորության վրա նկատվում է ինչպես բակտերիաների ընդհանուր
թվի, այնպես էլ աղիքային ցուպիկների թվի ավելացում, ընդ որում
պետք է նշել, որ այդ հատվածում գետը լրացուցիչ կեղտոտման չի են-
թարկվում: Այս հատվածում բակտերիաների ընդհանուր թիվը կազմում է
սկզբնականի 125—137⁰/₁₀₀-ը: Որոշ դանդաղահոս գետերում բակտերիաների
թվի երկրորդային ավելացումը գրավանաթյան մեջ նկարագրված է Ս. Ն.
Մարտգանովի [7] և ապա Ս. Ի. Օվսենկի ու Մ. Վ. Միխայլովայի կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ լեռնային գետերի բակտերիալ ինքնամաքր-
ման վերաբերյալ գրավանաթյանից մեզ հայտնի միակ աշխատությունը մեջ
(Ս. Ի. Ռեյխերտս [6]) բակտերիաների առավելագույն թիվը նկատվել է
քնակավայրից անմիջապես ցած հատվածում, առանց բակտերիաների թվի
երկրորդային ավելացման: Մեր տվյալներն ուշադրության արժանի են
այն տեսակետից, որ այդ երևույթը տեղի է ունենում ոչ միայն որոշ
դանդաղահոս գետերում (20—40 մամվա ընթացքում), այլև այն հնարա-

Բակտերիաների
Ընդհ. թիվը 1մլ

Աղիքային ցուցիկի
համակցը 1մլ



Նկ. 1. Բակտերիոլոգիական անալիզի տվյալները գետի տարբեր հատվածներում:

Վոր է նաև արագահոս լեռնային գետերում (մոտ 1,5 ժամվա ընթացքում), իսկ պետք է նշել, որ Ողջի գետում բակտերիաների երկրորդային ավելացումը տեղի է ունենում բավական թույլ: Ամենայն հավանականությամբ, Ողջի գետում այս երևույթի առաջացման համար մեծ նշանակություն ունի մի այլ գործոն՝ բակտերիաներով հարուստ կախված մասնիկների կոտորակումն ու մանրացումը քարքարոտ հունի և ջրի հոսանքի մեծ արագությամբ շնորհիվ:

Բակտերիաների թվի երկրորդային ավելացման վայրից ցած նկատվում է ինչպես բակտերիաների ընդհանուր թվի, այնպես էլ աղիքային ցուցիկների թվի զգալի նվազում: Այսպես՝ 8 կմ վրա աղիքային ցուցիկների թիվը, միջին հաշվով, կազմում է 63, իսկ բակտերիաների ընդհանուր թիվը՝ 742, սակայն բակտերիաների թիվը այս հատվածում, այնուամենայնիվ, բարձր է: 1 ժամվա ընթացքում բակտերիաների ընդհանուր թվի 180/0-ը ոչնչանում է: Այս տեսակետից մեր տվյալները համընկնում են Ա. Ի. Ռեյխիլաձեի տվյալներին: Բակտերիաների թվի արագ նվազում նկատվում է նաև 8 կմ ցած գտնվող հատվածներում: 12 կմ-ի վրա գտնվող հատվածում, այսինքն բակտերիաների երկրորդային ավելացման վայրից 8 կմ ցած, բակտերիաների ընդհանուր թվի նվազումը կազմում է 44,50/0: 14 կմ-ի վրա գտնվող հատվածում բակտերիաների ընդհանուր թիվը 1 միլիլիտրում, միջին հաշվով, կազմել է 252, իսկ աղիքային ցուցիկների թիվը՝ 32: Այս հատվածում բակտերիաների թվի նվազման տեսակետից մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ողջի գետն ընդունում է Գեղի վտակը, որը նստրացնում է գետի ջուրը: Ողջի գյուղից 22 կմ ցած, Բեխ բանավանին գետը մոտենում է հետևյալ բակտերիոլոգիական տվյալներով՝ բակտերիաների ընդհանուր թիվը 1 սմ³-ում 23—71 (միջինը 47), աղիքային ցուցիկների թիվը 1 սմ³-ում 1—10: Այս հատվածից բնագամներ 2—3 կմ ցած (Ղափան քաղաքից անմիջապես վերև)

բակտերիոլոգիական ցուցանիշները բարձրանում են: Ղափան քաղաքից ցած գետը բավական կեղտոտված է բակտերիաներով, իր ամբողջ ստորին հոսանքում, լրացուցիչ կեղտոտման շնորհիվ, մենք հնարավորություն չենք ունեցել նկատելու բակտերիաների մահացման պրոցեսը: Բակտերիալ ինֆնամաքրման գինամիկոսյի ուսումնասիրությունը տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում գետի Քաջարան-Ղափան հատվածը:

Ողջի գետի բակտերիոլոգիական ուսումնասիրություններից երևում է, որ բակտերիաների թվի նվազումը Քաջարանից ցած տեղի է ունենում լիովին, մինչև նվազագույնին հասնելը: Բեխ բանավանի մոտ բակտերիաների քիչ լինելը, որը գրեթե համապատասխանում է գետի կեղտոտումից զերծ հատվածներում ստացված տվյալներին, վկայում է գետի բակտերիալ ինֆնամաքրման ավարտման մասին: Եթե կեղտոտման վայրից անմիջապես ցած (Ողջի գյուղից ցած), գետում բակտերիաների ընդհանուր թիվն ընդունեք $100^0/0$, ապա 4 կմ ցած հատվածում այն կլինի $125^0/0$, 8 կմ ցած՝ $92^0/0$, 12 կմ ցած՝ $69^0/0$, 14 կմ ցած՝ $31^0/0$ և, վերջապես, 22 կմ ցած՝ $6^0/0$: Եթե նույն ձևով Ողջի գյուղից ցած աղիքային ցուպիկների թիվն ընդունեք $100^0/0$, ապա այդ վայրից 4 կմ ցած կունենանք $137^0/0$, 8 կմ ցած՝ $98^0/0$, 12 կմ ցած՝ $70^0/0$, 14 կմ ցած՝ $50^0/0$, 22 կմ ցած՝ $6^0/0$: Այսպիսով ինֆնամաքրման պրոցեսների ժամանակ, 1 ժամվա ընթացքում, միջին թվով, ոչնչանում է բակտերիաների $13^0/0$ -ը:

Բերված թվերը ցույց են տալիս, որ Ողջի գետի ինֆնամաքրման պրոցեսում բակտերիաների մահացումը տեղի է ունենում բավական արագ: Բակտերիալ ինֆնամաքրումը Ողջի գետում ավարտվում է 24 կմ հեռավորության վրա, որը գետի ջուրն անցնում է 7 ժամ 50 րոպեի ընթացքում:

Եթե մեր տվյալները համեմատենք դանդաղահոս գետերի ուսումնասիրության տվյալների հետ, ապա դժվար չի լինի նկատել, որ Ողջի գետում ինֆնամաքրման պրոցեսը ավարտվում է 10—15 անգամ ավելի արագ: Այսպիսով, Ողջի գետի բակտերիալ ինֆնամաքրման ուսումնասիրությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ բակտերիաների ոչնչացման մեջ մեծ նշանակություն ունեն գետի հիդրոլոգիական առանձնահատկությունները: Դա բացատրվում է նրանով, որ Ողջի գետի հոսանքի մեծ արագությունը և քարքարոտ հունը բաժնեպատասխանում են ստեղծել ջրի՝ թթվածնով արագ հագեցման համար, որը, մեխանիկական այլ գործոնների հետ մեկտեղ, արագացնում է օրգանական նյութերի քայքայումը և բակտերիաների ոչնչացումը:

Ստացված տվյալների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

1. Քաջարանից վեր Ողջի գետի ջուրը սանիտարա-բակտերիոլոգիական կազմով գործնականում մաքուր է և վնասազերծելուց հետո Քաջարան ու Ողջի բնակավայրում կարող է օգտագործվել խմելու և տնտեսական նպատակների համար:

2. Բնակավայրերից վեր հատվածում գետի կեղտոտման առաջնությունը ժամանակ աղիքային ցուպիկի տիարը ավելի զգայուն ցուցանիշ հանդիսացավ, քան բակտերիաների ընդհանուր թիվը:

3. Կեղտոտման վայրից 4 կմ ցած ընկած մասում նկատվում է բակ-

տերիաների երկրորդային ավերացում, որը, սակայն, տեղի է ունենում թույլ արտահայտված ձևով, գրանից ցած բակտերիաների թիվը արագ կերպով նվազում է:

4. Ողջի գետում բակտերիալ ինֆամաքրումը ավարտվում է 22 կմ հեռավորության վրա կեղտոտման մոմենտից հաշված (7 ժամ 50 րոպեի ընթացքում), այսինքն ժամանակի տեսակետից 10—15 անգամ ավելի արագ, քան դանդաղահոս գետերում:

5. Ողջի գետի ինֆամաքրման պրոցեսների ժամանակ մեծ նշանակություն ունեն հիդրոլոգիական առանձնահատկությունները (գետի արագ, գալարուն հոսանքը, քարքարոտ հունը և այլն):

6. Ս. Ի. Ռյխիլաձեի [6] կողմից առաջարկվող՝ լեռնային գետերի մաքրության ստանդարտը ըստ բակտերիաների ընդհանուր թվի, մեր կարծիքով, չի կարող ընդունելի լինել բոլոր լեռնային գետերի համար:

Իրևանի Բժշկական ինստիտուտի
կոմունալ հիգիենայիամբիոն

Ստացվել է 28 III 1956 թ.

Т. А. АСМАНГУЛЯН

К ВОПРОСУ О БАКТЕРИАЛЬНОМ САМООЧИЩЕНИИ ГОРНЫХ РЕК

Р е з ю м е

Участок реки Вохчи, находящийся выше поселка Каджаран, в санитарно-бактериологическом отношении является чистым и после предварительного обезвреживания может быть использован для водоснабжения населения.

Исследование речной воды в своем естественном состоянии показывает, что стандарт „чистоты“ горных рек, предлагаемый С. И. Рцхиладзе [6], в частности в отношении общего числа бактерий (500 колоний в 1 мл при 37°) не приемлем в отношении реки Вохчи.

Ниже населенных пунктов Каджарана и Охчи во все времена года речная вода была бактериально загрязненной. Количество кишечных палочек в 1 см³, при нашем исследовании равнялось 64, общее число бактерий 800. 5 км ниже села Охчи отмечалось вторичное слабое увеличение количества бактерий (130%).

Ниже этой точки количество бактерий (общее число бактерий и кишечная палочка) быстро убывает.

Средняя почасовая скорость отмирания бактерий на участке Каджаран—Кафан составляет 13%.

Процесс отмирания бактерий в реке Вохчи происходит довольно быстро, он заканчивается на 22—23 км вниз по течению от села Охчи (за 7 часов 50 минут). Ниже г. Кафана, вследствие местных загрязнений, река на всем своем течении остается бактериально загрязненной.

Быстрое течение реки Вохчи создает благоприятные условия для отмирания бактерий, вследствие чего бактериально самоочищение сравнительно с медленно текущими реками, заканчивается в 10—15 раз быстрее.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Айзінбуд Ю. И. Экспериментальные исследования по самоочищению водоемов от тифопаратифозной группы бактерий. Автореферат диссертации, Москва, 1953.
2. Блохин И. И. Выживаемость и изменчивость палочек брюшного тифа и паратифа в воде. Сб. трудов Горьковского института эпидемиологии и микробиологии, Горький, 1951.
3. Колтунова А. С. Отмирание бактерий в процессе самоочищения водоемов. Рукопись, Институт общей и коммунальной гигиены, Москва, 1941.
4. Овсепян Т. А. Санитарное состояние р. Раздан. Рукопись, Ин-т эпидемиологии и гигиены, Минздрав Армянской ССР, 1955.
5. Перетц Л. и М двединская К. Г. Роль микробного антагонизма в самоочищении воды. Сб. „Вопросы санитарной бактериологии“, М., 1948.
6. Рихиладзе С. И. Загрязнение и самоочищение реки Куры. Сб. „Санитарная характеристика водоемов“, М., 1951.
7. Строганов С. Н. Загрязнение и самоочищение водоемов, Москва, 1939.

Համառոտ գիտական հաղորդումներ

Ա. Կ. ՌԻՍՏՅԱՆ

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՌՎՈՒՅՏԻ ՏԵՐԵՎԱՅԻՆ, ԵՐԿԱՐԱԿՆՃԻԹԻ ԵՎ
ԱՌՎՈՒՅՏԻ ՍԵՐՄՆԱԿՆԵՐԻ ՊԱՐԱՋԻՏ
ՄԻՋԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արարատյան հարթավայրի պայմաններում առվույտի հիմնական վնասատուներից են առվույտի տերեւային երկարակնճիթը (*Phytonomus variabilis* Hbst) և առվույտի սերմնակերը (*Bruchophagus gibbus* Boh.), Պայքարի բացահայտված պայմաններում ֆիտոնոմուսը ոչնչացնում է առվույտի առաջին հարի խոտի գրեթե մեկուկեսը բերքը, իսկ սերմնակերը վարակում է առվույտի սերմերի 60—80%-ը:

Վնասատուների մասնայական բազմացումը կանխելու գործում վճռական դեր են խաղում նրանց բնական թշնամիները՝ պարազիտ միջատները, վերջիններիս տեսակային կազմի, բխողդիայի, ինչպես նաև օդում առկա ռուբյան չափի ուսումնասիրումը կարևոր խնդիր է հանդիսանում:

1952—1955 թվականների ընթացքում կատարած ուսումնասիրությունները պարզել են, որ Արարատյան հարթավայրի պայմաններում ֆիտոնոմուսը պարազիտվում է 5 և առվույտի սերմնակերը՝ 2 տեսակի պարազիտ միջատներով:

Ֆիտոնոմուսը պարազիտվում է *Canidia* (*C. curculionis*) *exigua* Grav., *Dinocampus* (*Perilitus*) *terminatus* Nees., *D. secalis* Hal., *Necremnus leuear. throps* Thoms., *Tetrastichus incertus* Ratz.: Բացի կանխդիայից, մյուս պարազիտները Հայկական ՍՍՌ-ում նշվում են առաջին անգամ:

Կանիդիա (*Canidia exigua* Grav. ընտանիք *Ichneumonidae*): Կանիդիան մոնոֆագ է: Գրականության տվյալների համաձայն, աճենուրեք ձմեռում է բոժոժի մեջ թրթուր վիճակում: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արարատյան հարթավայրի պայմաններում ձմեռում է նույնպես բոժոժներում, բայց ինչպես թրթուր, այնպես էլ հասուն վիճակում: Վ. Վ. Յախոնտովի տվյալներով [9], կանիդիան պարազիտում է ֆիտոնոմուսի 3—4-րդ և նույնիսկ վերջին հասակի թրթուրներին: Նույն հեղինակի մեջբերմամբ, Գ. Մարտելլին (1911) նշում է, որ Իտալիայում նա պարազիտում է ֆիտոնոմուսի երիտասարդ հասակի թրթուրներին: Արարատյան հարթավայրի պայմաններում պարազիտում է 3-րդ հասակի թրթուրներին:

Կանիդիայի թափչքն սկսվում է ապրիլին և տևում է մինչև հունիսի վերջը: Կանիդիայի ձվադրումից 15—20 օր հետո ֆիտոնոմուսի պարազիտակիր թրթուրներից դուրս են գալիս զարգացումն ավարտած թրթուրները և սկսում են անմիջապես բոժոժավարվել, որից 10—12 օր հետո բու-

կրթում է նրանց թափաքը Հասուն պարապիտի կյանքի տեղաթյունը եղել է 3—8 օր:

Կանիդիան Միջին Ասիայում և Իստալիայում տալիս է 2 սերունդ, իսկ Արարատյան հարթավայրի պայմաններում՝ մեկ լրիվ և երկրորդը ոչ լրիվ սերունդ: Կանիդիայի բուժումն ընդունակ է թույլ գրգռումից ցատկեր վ. վ. Յախոնտովի մեջբերմամբ [9], Ն. Ա. Գրոսդեյմբ (1914) գտնում է, որ նման շարժումներով նա ազատվում է տիրոջ բուժումից, միաժամանակ այն երկրորդական պարապիտից պաշտպանվելու միջոց է: Մեր գիտությունների համաձայն, այդ երևույթը կապված է նաև պարապիտի պարգաղման օրոշ տատիճանի հետ, որից հետո նման շարժումներ չեն նկատվում:

Կանիդիայով վարակված ֆիտոնոմոսի թրթուրները նորմալ ձևով հյուսում են բուժում, որից հետո թրթուրների գույնը փոխվում է: Պարապիտի թրթուրը բաց պեղնավուն է, ֆիտոնոմոսի թրթուրից դուրս գալուց 24 ժամվա ընթացքում հյուսում է օվալաձև բուժում, սկզբում այն լինում է դեղնապիտակավուն, իսկ հետո դառնում է շագանակագույն, նրա կենսաբանական մասից անցնում է սպիտակ օղակ:

Վ. Վ. Յախոնտովի ուսումնասիրությունների համաձայն [9], 1928 թվականին Միջին Ասիայում ֆիտոնոմոսի թրթուրների պարապիտովածությունը կանիդիայով տատանվել է 56—58⁰/₀-ի սահմաններում: Ն. Ա. Օսիպովայի [5] տվյալներով, ֆիտոնոմոսի թրթուրների պարապիտովածությունը Արարատյան հարթավայրի պայմաններում աննշան է: Ս. Գ. Խոմախովի [1] տվյալներով, Ազրբեջանում այն հասել է մինչև 98⁰/₀-ի: Մեր ուսումնասիրությունների համաձայն, այն տատանվել է 5,5—84,2⁰/₀-ի սահմաններում:

Այդպիսի ուժեղ տատանումը բացատրվում է նրանով, որ մեր ուսումնասիրությունները չեն սահմանափակվել մեկ հաշվառման ժամկետով, այլ այն սկսվել է օպրիլին և շարունակվել մինչև հուլիսի երկրորդ կեսը: Ապրիլի երկրորդ տասնօրյակում հավաքված թրթուրների պարապիտովածությունը եղել է 5,5, հունիսի երկրորդ տասնօրյակում՝ 84,2⁰/₀: Թրթուրների պարապիտովածության այսպիսի տատանման պատճառը պետք է բացատրել նրանով, որ պարապիտման ենթակա թրթուրների թիվը դաշտում եղել է տարբեր, այսպես՝ սկզբում նրանք եղել են շատ, իսկ պարապիտները քիչ, որի հետևանքով ստացվել է պարապիտովածության ցածր տոկոս, ավելի ուշ ժամկետում թրթուրները մասսայաբար անցել են հարսնյակավորման, դաշտում խիտ կերպով նվազել է թրթուրների ընդհանուր թիվը, միաժամանակ պարապիտի երկրորդ սերունդի թափաքի հետևանքով ավելանում է վերջինիս քանակը, այդ պատճառով թրթուրների և պարապիտների թվի հարաբերությունը խիտ փոփոխվում է հողում պարապիտի որի հետևանքով մեծանում է նրա պարապիտվելու հարավորությունը, ինչու և ավելի ժամկետում հավաքված թրթուրների պարապիտովածության տոկոսը խիտ մեծացել է (84,2): Այս տվյալները ցույց են տալիս, որ նույն ժամանակահատվածում ֆիտոնոմոսի թրթուրների պարապիտովածությունը անգամ նույն դաշտում կարող է տարբեր լինել:

Որպես ընդհանուր օրինաչափություն կարելի է նշել, որ վնասատու միջատների պարապիտովածության տատիճանը պայմանավորված է հիմնա-

կանում պարազիտի և պարազիտի միջև թվական հարաբերությունը, որքան մեծ է պարազիտի թիվը և քիչ են պարազիտի միջատները, այնքան մեծ է նրանց պարազիտիկոս հնարավորությունը:

Կանիդիայի մաս հայտնաբերվել են Mesochorus sp., Habrocytus sp. զերպարազիտները՝ կանիդիայի նրանցով պարազիտվածություն տակսորաննշան է (200 պարազիտի բոժոժից դուրս է եկել ընդամենը 2 հատ) եղել:

Դինոկամպուս (Dinocampus terminatus Nees. բնատանիք Braconidae): Դինոկամպուսը, որպես ֆիտոնոմուսի բզեզի պարազիտ, Միջին Ասիայում նշվել է 1929 թվականին Վ. Վ. Յախոնտովի [9] կողմից:

Ի. Ա. Պորչինսկին [6], Ա. Ա. Օդլորլինը [4], Վ. Վ. Յախոնտովը [9] և Ն. Ա. Տելենգան [8] դինոկամպուսին նշում են որպես յոթ կեսանի զատկարգեզի պարազիտ: Ա. Ա. Օդլորլինի տվյալներով, հազվադեպ պարազիտել է նաև Propylae 14-punctata L.: Մեր ուսումնասիրությունների ընթացքում այս միջատը պարազիտել է միայն ֆիտոնոմուսի բզեզներին: Չատկարգեզների պարազիտվածությունը դեպքեր այս միջատով մեր կողմից չեն հայտնաբերվել:

Արարատյան հարթավայրի պայմաններում պարազիտը ձմեռում է տիրոջ՝ ֆիտոնոմուսի բզեզների մեջ: Նրա թրթուրները բզեզներից սկսում են դուրս գալ ապրիլի երկրորդ տասնօրյակում, իսկ մասսայական թռիչքը լինում է նույն ամսի վերջերին: Առվույտի դաշտում հանդիպում է մինչև հունիսի վերջը:

D. secalis Hal. Վ. Վ. Յախոնտովի [9] մեջբերմամբ, Ն. Ա. Տելենգայի տվյալներով (1930), Միջին Ասիայում պարազիտում է ֆիտոնոմուսի բզեզներին: Մեր հետազոտությունների համաձայն, Արարատյան հարթավայրի պայմաններում նույնպես պարազիտում է ֆիտոնոմուսի բզեզներին:

Դինոկամպուսը առկա է 3—4 սերունդ: 11,9—17,6° ջերմության պայմաններում պարազիտի բոժոժավորվելուց 16—18 օր հետո դուրս են գալիս հատուկները, իսկ 20—27°-ի դեպքում՝ 9 օր հետո: Այս վերջին ջերմաստիճանի պայմաններում նրանք բզեզների մեջ դարձաճումն ավարտում են 9—12 օրում: Մայիսին մեկ սերնդի զարգացման տևողությունը եղել է 25—30 օր, հունիսին՝ 19—20 օր:

Ֆիտոնոմուսի պարազիտակիր բզեզները արտաքինով չպարազիտված բզեզներից ոչնչով չեն տարբերվում, միայն պարազիտի թրթուրի դուրս գալուց հետո նրանք դանդաղաճում են դառնում, չեն սնվում և 1—2 օր հետո մատնում են: Պարազիտի թրթուրները գեղնավուն են և շարժուն, 3—4 ժամվա ընթացքում հյուսում են օվալաձև սպիտակ դուլնի բոժոժուկաչում սուբստրատին: Հաբսյակներից դուրս գալուց 24 ժամ հետո պարազիտը ձվադրման համար սկսում է հեռանալ ֆիտոնոմուսի բզեզներին և բաց չի թողնում դոհին, քանի դեռ չի ձվադրել նրա մեջ: Հասուն պարազիտի կյանքի տևողությունը 3—6 օր է:

Ֆիտոնոմուսի բզեզների պարազիտվածությունը Արարատյան հարթավայրի պայմաններում տատանվել է 1,4—60%-ի սահմաններում: Վ. Վ. Յախոնտովի [9] տվյալներով, Միջին Ասիայում այն տատանվել է 2—12%-ի սահմաններում:

Նեկրեմնուս (*Necremnus leucarthrops* Nees, ընտանիք Chalcididae): Հանդիսանում է ֆիտոնոմուսի հարսնյակի պարադիտ: Վ. Վ. Յախոնտովի [9] մեջբերմամբ, Տ. Բ. Չեմբերլինի տվյալներով (1925), ֆիտոնոմուսի մեկ պրոնիմֆայի մեջ կղել է մաքսիմում 18 պարադիտ: Մեր հետազոտությունների համաձայն, Արարատյան հարթավայրի պայմաններում պարադիտում է ֆիտոնոմուսի բոժոժավորման նախադասության 1-ին թրթուրներին, հասունները ստացվել են ֆիտոնոմուսի հարսնյակներից: Ֆիտոնոմուսի յուրաքանչյուր հարսնյակից դուրս է գալիս մեկ պարադիտ: Մեր ուսումնասիրությունների ընթացքում չհայտնաբերվեց այնպիսի դեպք, որ մեկ հարսնյակից դուրս գա մեկից ավելի պարադիտ: Երկրորդ տվյալները հաստատվում են դաշտավարորատոր հետազոտություններով, այսպես՝ հերձված ֆիտոնոմուսի 2000 հարսնյակներից ոչ մեկի մեջ չհայտնաբերվեց մեկից ավելի պարադիտ:

Դաշտավարորատոր պայմաններում նրանց հասունները ստացվել են հունիսին: Ֆիտոնոմուսի հարսնյակների պարադիտվածությունը կղել է մինչև $70/0$:

Տետրաստիխուս (*Tetrastichus incertus* Ratz, ընտանիք Chalcididae): Հանդես է գալիս ավելի քան դաշտում ապրելին և հանդիպում է մինչև հուլիսի առաջին կեսը: Հուլիսի 2-ին հավաքված ֆիտոնոմուսի պարադիտակիր թրթուրներից պարադիտի թուխքը կղավ միայն հաջորդ տարվա ապրիլին: Հասուն պարադիտները դուրս գալուց անմիջապես հետո սկսում են բեղմնավորվել, որից հետո խիստ ակտիվ են լինում, նրանք զոհին բաց չեն թողնում, քանի դեռ չեն ձվադրել նրա մեջ:

Տետրաստիխուսը պարադիտում է ֆիտոնոմուսի վերջին հասակի թրթուրներին, որոնք 2—3 օր հետո սկսում են բոժոժավորվել: Մեկ պարադիտը կարող է պարադիտել ֆիտոնոմուսի 1—6 թրթուրի: Պարադիտակիր յուրաքանչյուր թրթուրից դուրս են գալիս 7—32 պարադիտ: Պարադիտված թրթուրների մեծ մասը նորմալ ձևով բոժոժավորվում է, իսկ երբեմն նրանք, բոժոժապատումը լրիվ չավարտած, բոժոժի մեջ դառնում են կիսալուսնաձև, ստանում են դորշ գունավորում: Նման թրթուրները թույլ կերպով սեղմելուց փշրվում են և նրանց միջից դուրս են թափվում պարադիտի բույսաթիվ թրթուրներ, իսկ երբեմն էլ ձևավորված պարադիտներ: Վերջինները նորմալ դեպքում ֆիտոնոմուսի թրթուրների մաշկի վրա բաց են անում օվալաձև անցք և դուրս թռչում:

Ուսումնասիրություններից պարզվեց, որ տետրաստիխուսը Արարատյան հարթավայրի պայմաններում ապրիլ է 2—3 սերունդ: Ֆիտոնոմուսի թրթուրներին տետրաստիխուսով վարակվածությունը տատանվել $1,5—70/0$ -ի սահմաններում:

Առվույսի սերմնակեր (*Bruchophagus gibbus* Boh): Արարատյան հարթավայրի պայմաններում պարադիտվում է Chalcididae ընտանիքին պատկանող *Liodontomerus perplexus* Gah. և *Geniocerus bruchophagi* Gah. միջատներով, որոնք Հայկական ՍՍՏ էնտոմոֆագուսայի կազմում նշվում են առաջին անգամ:

Լիոնտոմերուս (*Liodontomerus perplexus* Gah.): Մ. Ն. Նիկոլսկայայի տվյալներով [2], ավելի քան սերմնակերը պարադիտվում է

4,5⁰/₀՝ Վ. Վ. Ռյախովսկու տվյալներով [7], կորնգանի սերմերի՝ լիոդոն-տոմերուսով պարազիտվածությունը հասել է 6,6⁰/₀-ի: Մեր ուսումնասի-րությունների համաձայն, առվույտի սերմնադաշտի միենույն հարի տար-րեր ժամկետներում հավաքած առվույտի սերմերի մոտ սերմնակերի պա-րազիտվածությունը տատանվել է 2,4—47,8⁰/₀-ի սահմաններում:

Լիոդոնտոմերուսի մոտ ևս նկատվում է այն օրինաչափությունը, որ սերմերի՝ սերմնակերով վարակվածությունը բարձրանալու դեպքում նվա-զում է նրա օգտակար գործունեությունը և, ընդհակառակը, այսպես, երբ սերմերի՝ սերմնակերով վարակվածության տոկոսը հասել է 6,5⁰/₀-ի, պա-րազիտվածությունը եղել է 47,8⁰/₀: Իսկ երբ սերմերի՝ սերմնակերով վա-րակվածությունը եղել է 78,5⁰/₀, սերմնակերի պարազիտվածության տոկո-սը եղել է ընդամենը 2,4: Այդ դեպքում ևս հաստատվում է այն, որ վնա-սատուի թվական նվազ ֆոնի վրա պարազիտների օգտակար գործունեու-թյունը բարձրանում է: Լիոդոնտոմերուսը Հայկական ՍՍՌ-ում տալիս է այնքան սերունդ, որքան առվույտի սերմնակերը: Չմեռում է սերմերի մեջ՝ տիրոջ օրգանիզմում:

Գենիոցերուսի (*Geniocerus bruchophagii* Gah.) թռչքը Արարատյան հարթավայրի պայմաններում սկսվում է առվույտի սերմնա-կերի թռչքի հետ միաժամանակ: Տալիս է այնքան սերունդ, որքան առ-վույտի սերմնակերը: Չմեռում է թրթուր վիճակում՝ առվույտի սերմնա-կերի թրթուրի մեջ:

Մեր ուսումնասիրությունների համաձայն, Արարատյան հարթավայ-րում առվույտի սերմնակերի՝ գենիոցերուսով պարազիտվածությունը տա-տանվել է 22,6—72,3⁰/₀-ի սահմաններում: Այս պարազիտի մոտ ևս նկատ-վում է նման օրինաչափություն, այսինքն, երբ առվույտի սերմերի՝ սերմ-նակերով վարակվածության տոկոսը ցածր է, ապա պարազիտի օգտակար գործունեությունը բարձրանում է և, ընդհակառակը, այսպես, սերմերի՝ սերմնակերով վարակվածությունը եղել է 6,5⁰/₀, պարազիտվածությունը կազմել է 72,3, իսկ սերմերի՝ սերմնակերով վարակվածությունը 78,5⁰/₀ լինելու դեպքում պարազիտվածությունը եղել է 35,3⁰/₀:

Մ. Ն. Նիկոլսկայայի տվյալներով [3], առվույտի սերմնակերի ընդհա-նուր պարազիտվածությունը տատանվել է 23,8—80,9⁰/₀-ի սահմաններում, մեր ուսումնասիրությունների համաձայն, Արարատյան հարթավայրի պայ-մաններում սերմնակերի՝ պարազիտներով ընդհանուր պարազիտվածու-թյունը տատանվել է 31,7—77,6⁰/₀-ի սահմաններում:

ՀՍՍՌ Գյուղմիտիստություն
Երկրագործության ինստիտուտ

Ստացվել է 13 XII 1936 թ.

А. К. УСТЬЯН

НОВЫЕ ДАННЫЕ О ПАРАЗИТАХ НАСЕКОМЫХ
ЛЮЦЕРНОВОГО СЕМЕЕДА

Р е з ю м е

В условиях Араратской равнины люцерновый листовой слоник (*Phytonomus variabilis* Hbst.) является главнейшим вредителем фуражной люцерны. При отсутствии мер борьбы фитономус почти полностью уничтожает первый укос люцерны. Семеед (*Bruchophagus gibbus* Boh.) заражает семена люцерны на 60—80%.

В деле ограничения массового размножения вредителей люцерны важную роль играют насекомые паразиты, почему и изучение видового состава паразитов, а также биологии и полезной деятельности их является важнейшей задачей сельскохозяйственной энтомологии.

В течение 1952—1955 гг. нами проводились специальные исследования по изучению паразитофауны люцерны в условиях Араратской равнины. Установлено, что фитономус паразитируется 5 видами насекомых.

Паразиты фитономуса следующие: *Canidia exigua* Grav. из семейства Ichneumonidae, *Dinocampus terminatus* Nees, D. (*Perilitus*) *secalis* Hal. из сем. Braconidae, *Necremnus leuearthrops* Thoms., *Tetrastichus incertus* Ratz. из сем. Chalcididae. Кроме конидий, остальные четыре вида для паразитофауны Армении отмечаются впервые.

Конидия паразитирует личинок третьего возраста. Зараженность личинок фитономуса этим паразитом варьировала от 5,5 до 84,2 %. Отмечены два сверхпаразита конидий *Mesochorus* sp. и *Habrocytus* sp.

Тетрастихус паразитирует личинок последнего возраста. Из каждой паразитированной личинки выходят от 7 до 32 паразита. Процент зараженности личинок этим паразитом составлял от 1,5 до 70.

Некремнус паразитирует фитономус в фазе нимфы. Из каждой куколки всегда вылетал один паразит. Процент зараженности достигает до 7.

Динокампус заражает жуков фитономуса. Зараженность колебалась от 1,4 до 60%.

Семеед люцерны паразитируется двумя видами насекомых: *Liodontomerus perplexus* Gah., *Geniocerus bruchophagii* Gah. из сем. Chalcididae.

Лет этих паразитов начинается почти одновременно с летом семееда. Дают столько поколений, сколько и семеед. Зараженность семееда лiodонтомерусом колебалась от 2,4 до 47,8%, гениоцерусом от 22,6 до 72,3%. Оба паразита для паразитофауны Армении отмечены впервые.

Как общая закономерность наблюдается увеличение полезной деятельности паразитов при численном уменьшении вредителей.

Փ Ր Ա Վ Ա Ն ՈՒ Ք Վ ՈՒ Ն

1. Исмаилов М. Г. Паразиты фитонюса и перспективное использование их в борьбе с этим вредителем. XVIII Пленум Секции защиты растений ВАСХНИЛ. Тезисы докладов, I, Баку, 1949.
2. Мейер Н. Ф. Паразитические перепончатокрылые сем. Ichneumonidae СССР и сопредельных стран, вып. IV, 1935.
3. Никольская М. Н. О клеверном семееде (*Bruchophagus gibbus* Boh.) и его паразитах на люцерне в СССР. Защита растений, Ленинград, 1932.
4. Оглоблин А. А. К биологии божьих коровок (Coleoptera, Coccinellidae). Русское энтомолог. обозрение, т. XIII, 1, 1913.
5. Осипова Н. В. Результаты изучения фитонюса в хлопковой зоне Армении и химических мер борьбы с ним. Сборник трудов по защите растений, вып. I, Ереван, 1946.
6. Порчинский И. А. Наши божьи коровки и их хозяйственное значение. Труды бюро по энтомологии, т. IX, 11, 1912.
7. Ряховский В. В. Паразиты и хищники эспарцетных семеедов. Биологический метод борьбы с вредными насекомыми. Киев, 1954.
8. Теленга Н. А. Биологический метод борьбы с вредными насекомыми, Киев, 1948.
9. Яхонтов В. В. Листовой люцерновый слоник (*Phytonomus variabilis* Hbst.). Монография, Москва—Ташкент, 1934.

Համառոտ գիտական հաղորդումներ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ՄԱՌԵՐԻ ՔԼՈՐՈՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ
ՆՐԱ ԴԵՄ

Վերջին երկու-երեք տարում նոր Բայազետի, Մարտունու, Բասար-դեշարի շրջանների կոլտնտեսությունների պտղատու այգիներում տարածվել է քլորոզ հիվանդությունը, որի պատճառով ծառերը խիստ տուժում են:

Պտղատու այգում աճեցվող գրեթե բոլոր ծառատեսակները հիվանդանում են քլորոզով: Քլորոզի արտաքին նշանները տերևների, երբեմն էլ ընձյուղների դեղնելն են: Հիվանդության ժամանակ բույսերը թուլանում են, կանգ է առնում աճեցողությունը և նրանք չորանում են: Քլորոզով կարող է վարակվել ինչպես ամբողջ ծառը, այնպես էլ նրա առանձին ճյուղերը: Քլորոզը կարող է լինել երկարատև կամ խրոնիկական և կարճատև: Երկարատև քլորոզի դեպքում ծառը ամեն տարի հիվանդանում և երբ հիվանդությունը երկար է տևում, ծառը չորանում է: Կարճատև քլորոզը միջավայրի բարենպաստ պայմանների ազդեցության տակ որոշ ժամանակից հետո անցնում է:

Սովորաբար քլորոզով հիվանդ ծառերի նոր բացված տերևները լինում են նորմալ, կանաչ գույնի, որոշ ժամանակից հետո դրանք դեղնում են: Սկզբում դեղնում են տերևի գլխավոր ջղերի միջև ընկած մասերը, իսկ ջղերը և նրանց շուրջը գտնվող որոշ մասեր կանաչ են մնում: Հետագայում տերևաթիթեղը լրիվ դեղնում է, նրա վրա սկսում են երևալ հյուսվածքի չորացած մասեր, կանաչ են մնում միայն ջղերը և տերևակոթունը: Այսպիսի ուշ տերևներն ամբողջությամբ չորանում են և թափվում: Քլորոզի ժամանակ քայքայվում են քլորոֆիլի հատիկները, որոնց միջոցով կատարվում է բույսերի օդային սննդատությունը (ֆոտոսինթեզը): Այդ պատճառով քլորոզով հիվանդ բույսերը սննդի մշտական կարիք են զգում, տերևները, պտուղները թափվում են, հաճախ տեղի է ունենում ծաղկավիժում, ընձյուղները մնում են բարակ, բնավայտը մնում է փխրուն, որի հետևանքով հաճախ չի դիմանում ձմեռվա սառնամանիքներին և ցրտահարվում է:

Քլորոզի առաջացման հիմնական պատճառը հողում ծրկաթի միացությունների պակասն է կամ ջրում նրանց դժվար լուծելի լինելը, որի հետևանքով երկաթն անմատչելի է դառնում արմատների յուրացման համար: Քլորոզի պատճառ կարող է հանդիսանալ հողում ածխածնի քիմիական կրի և ջրի ավելցուկը, որի հետևանքով խախտվում է բույսի՝ հանքային նյութերով սնվելու պրոցեսը: Քլորոզը կարող է առաջանալ նաև միջավայրի այլ անբարենպաստ պայմանների և վատ ագրոտեխնիկայի հետևանքով:

Քլորոզի դեմ պայքարի միջոցառումներ առաջադրելիս նախ և առաջ պետք է պարզել, թե ինչից է առաջացել այն: Եթե պատճառը ջրի ափեցուկն է, պետք է կանոնավորել ռոտացիոն կամ մեխիորատի միջոցառումներ կիրառել, եթե պատճառը երկաթի պակասությունից է, պետք է հիփանդ ծառերը մի քանի անգամ ջրել երկաթարջատով 1 տոկոսանոց լուծույթով, մեկ քառակուսի մետրին ոգտադրվելով 8—10 լիտր հեղուկ: Կարելի է տերևները սրսկել երկաթարջատով 0,5 տոկոսանոց լուծույթով: Պետք է փխրեցնել և պարարտացնել հողը:

Սև սումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր աշգիներում քլորոզն առաջանում է տարբեր պատճառներից: Ամենից առաջ աշգիները հիմնադրելիս ճիշտ չի բնութագրվում հողը: Այդու համար պիտանի են հատկապես ափազա-կափային և կափա-ափազային հողերը: Պիտանի չեն այն հողերը, որոնց կրաքիճ շերտը հողի մակերեսին շատ մոտիկ է գտնվում: Այդպիսի հողերում բույսերը գեղնում են և առաջ է գալիս քլորոզ: Այսպես է նոր Բալթիկի շրջանի նորագույն գյուղի կոլտնտեսության աշգու հողամասը: Այստեղ ոչ հետու անցյալում եղել է ծովի հատակ և վերերկրյա, հումուսով հարուստ հողաշերտը շատ փոքր է, ջրի աննորմալ սեփմի հետևանքով ծառերը հիփանդանում են քլորոզով:

Շրջանի էանջադրյալ, Գեղարքունիք գյուղերի կոլտնտեսություններին աշգիների հողերում գրունտային ջրերը շատ մոտիկ են գտնվում, որը պատճառ է դառնում քլորոզի առաջացման: Ջրելու ոչ ճիշտ սեփմի և մեթոդի պատճառով է, որ քլորոզ է առաջանում Կարմիր և Հալստատ գյուղերի կոլտնտեսությունների աշգիներում: Հայ առատ, նորագույն գյուղերի կոլտնտեսությունների աշգիներում միջարքային տարածությունների հողը միշտ չի ոգտադրվում, աշգուկը ցանում են ծխախոտ, կարտոֆիլ, որոնք անընդհատ ջրվում են, այդ պատճառով էլ ծառերի տրամաները գտնվում են դերխոնավացման պայմաններում:

Անհրաժեշտ է այս աշգիների կողքով անցկացնել խոր առուներ, այս միջոցառումը կնպաստի աշգու հողի ցամաքեցմանը և գրունտային ջրերին մակարդակի իջեցմանը: Մյուս կողմից հարկավոր է վերջ տալ աշգում կարտոֆիլ կամ ծխախոտ մշակելուն: Կարելի է միջարքային տարածություններում մշակել թիթեռնածագկափոր, բանջարանոցային բույսեր, որոնք ջրի և սննդանյութերի նկատմամբ իրենց պահանջով չեն վնասում պտղատու ծառերին: Առհասարակ պետք է խույս տալ աշգին բաժանակա կամ ողողման սխառմով ջրելուց, որովհետև այդ ձևով հողը ջրվում է ոչ համապարպեա, երբեմն էլ որոշ մասերում ճահճուտ է առաջանում: Ջուրը պետք է տալ ակոսներով, որի համար միջարքային տարածությունների տարողջ երկարությամբ անց են կացվում 20—25 սմ խորությամբ ակոսներ՝ մեկը մյուսից 70 սմ հեռավորության վրա: Այս ձևով աշգին ջրվում է համապարպեա:

Բոլոր կոլտնտեսությունների աշգիներում քլորոզի առաջացմանը նպաստում են մոլախոտերը, որոնք առաջ են գալիս ծառերի մերձքնային տարածությունների անխնամ փճակի հետևանքով: Մերձքնային տարածությունների հողը չի փխրեցվում, մոլախոտերը չեն հեռացվում, որոնք հողից խլում են ծառի համար անհրաժեշտ սննդանյութերը, ջուրը և պատճառ դառնում նրանց թուլացման, իսկ մեծ մասամբ նաև ոչնչացման: Մոլախոտերը պետք է ոչնչաց-

նել վաղ դարձանից մինչև ուշ աշուն. այդ կարելի է անել ինչպես քաղհանի, այնպես էլ փխրեցման միջոցով (զգուշանալով արմատների կտրատումից), մինչդեռ այգեպանները բավարարվում են նրանով, որ ուղղակի ննձում են մերձքնային տարածությունների մոլախոտերը: Այդ դեպքում նրանց արմատները մնում են հողում և նորից շարունակում իրենց աճեցողությունը: Լեռնային շրջաններում ծառերը տնկելու առաջին տարում պետք է մերձքնային տարածությունը փխրեցնել 1 մետր տրամագծով, երկրորդ տարում պետք է հասցնել 1,5 մետրի, երրորդ տարում՝ 2 մետրի, չորրորդ տարում՝ 2,5 մետրի, հինգերորդ տարում՝ 3 մետրի, այնուհետև փխրեցումը պետք է ընդարձակել տարեկան կես մետրով, մինչև այն ժամանակ, երբ ծառը կդառնա 6—10 տարեկան: Պետք է նկատել, որ մեր բոլոր այգիներում այդ չի կատարվում, 10—12 տարեկան ծառերի մերձքնային տարածությունները 1,5 մետր տրամագծով հազիվ փխրեցված լինեն:

Այդուհողը 3—4 տարին մեկ աշնանը պետք է վարել 20—25 սմ խորությամբ, միաժամանակ մացնելով հողի մեջ օրգանական և հանքային պարարտանյութեր:

Պարզված է, որ քլորոզի նկատմամբ ավելի մեծ դիմացկունություն ունեն միջուրինյան խնձորենիներն ու տանձենիները: Այդ պատճառով այգին տնկելիս կամ նոր տնկիներ բերելիս պետք է առաջնությունը տալ հատկապես միջուրինյան սորտերին, որոնք աչքի են ընկնում նաև իրենց ցրտադիմացկունությամբ և բերքատվությամբ:

Քլորոզի դեմ կարելի է պայքարել, հաշվի առնելով նաև պարարտացման ճիշտ ուղիներ: Նկատվում է, որ տարիներ շարունակ այդուհողը չեն պարարտացնում կամ միակողմանի են պարարտացնում (օրինակ՝ ամեն տարի մացնում են ամոնիակային սելիտրա), այս հանգամանքն առաջացնում է հողի ուժասպառություն կամ սննդանյութերի միակողմանի կուտակում, որի հետևանքով խախտվում է բույսերի ներմալ հանքային սննդառությունը: Մեր փորձերը ցույց են տալիս, որ հողում սննդանյութերի կոմպլեքս ստեղծելով, կարելի է վերացնել քլորոզի ազդեցությունը: Հատկապես պետք է օգտագործել գոմադրահեղուկ՝ ծառին 2—3 դույլի չափով, սուպերֆոսֆատ և կալիական պարարտանյութեր (վերջինները հողում մացնել աշնանից):

Քլորոզի ժամանակ թուլանում է բույսի դիմադրողականությունը հիվանդությունների և վնասատուների նկատմամբ, որոնք արագացնում են բույսի ոչնչացումը: Այդ է պատճառը, որ քլորոզով հիվանդ բույսերի մոտ կարելի է հեշտությամբ տեսնել լվիճների բազմացում, սնկային տարրեր հիվանդությունների և այլն:

Ազրոտեխնիկական, քիմիական միջոցառումների, ջրման և սննդառությամբ ճիշտ կազմակերպելու միջոցով հնարավոր էլինի կանխել բույսերի քլորոզ հիվանդությունը և նրա վնասակար ազդեցությունը:

Վ. Մ. Մուրտուզի անվան Սրեանի պետական
համալսարանի կենսաբանական ֆակուլտետի
բույսերի օրոտեխնիկայի և մորֆոլոգիայի
ամբիոն

Մտացվել է 27 IX 1956 թ.

ИЗ ИНОСТРАННОЙ НАУЧНОЙ ЛИТЕРАТУРЫ

ВЛИЯНИЕ РАЗЛИЧНЫХ СЕВООБОРОТОВ НА ПОЧВЫ
 И УРОЖАЙНОСТЬ ПШЕНИЦЫ В ЗАПАДНОЙ АВСТРАЛИИ*

В этой работе, опубликованной в Лондоне в июле 1956 г., приводятся интересные экспериментальные данные (авторы Д. Дроувер и К. Ньютон), которые показывают влияние некоторых полевых севооборотов и бессменной культуры в течение 22—24 лет на содержание азота в почве, органических веществ, на некоторые физические свойства, и, в связи с этим, на урожайность пшеницы на песчано-суглинистых красноцветных каштановых почвах двух опытных станций западной Австралии, в зоне зерновых культур. На обеих опытных станциях были испытаны следующие 4 схемы

- Бессменная пшеница
- Пар-пшеница
- Пар-пшеница—выгон
- Пар-пшеница—люпин-люпин

Кроме этого результаты изменения химического состава почв в отношении азота и органических веществ, приведенных в работе в форме углерода, без пересчета на гумус, сравнивались с составом окружающих опытные участки девственных, не тронутых культурой почв. Основные результаты исследований можно представить в следующей обобщенной таблице:

Ротация	1 опытная станция			2 опытная станция		
	% азота	% орг. углер.	урожай пшеницы буш/акр	% азота	% орг. углер.	урожай пшеницы буш/акр
Бессменная пшеница	0,25	0,35	4,6	0,42	0,40	5,3
Пар-пшеница	0,21	0,27	13,0	0,021	0,24	8,1
Пар-пшеница—выгон	0,28	0,35	17,2	0,027	0,27	11,4
Пар-пшеница-люпин-люпин	0,037	0,49	22,3	0,040	0,41	15,9
Девственная почва	0,027	0,50		0,053	0,53	—

Приведенные в таблице данные показывают, что наиболее высоким содержанием азота и органического углерода отличается севооборот пар-пшеница-люпин-люпин, где и получается самый высокий урожай пшеницы—22,3 бушелей** на акр (или 18,26 ц на га), в то время как при бессменной культуре пшеницы получается лишь 4,6 бушелей на акр (или 3,77 ц на га), т. е. в 4—5 раз меньше; несколько меньше, но все же достаточно высокий урожай получается при севообороте пар-пшеница-выгон (17,2 буш.) (или 14.08 ц га). На второй опытной станции наиболее высокий урожай—15,9 бушелей на акр (или 12.87 ц на га) также получен при севообороте пар-пшеница—люпин-люпин, что в 3 раза больше урожая, чем получено при бессменной культуре пшеницы. Здесь, при севообороте с люпином и девственной почве содержание как азота, так и органического углерода несколько

* The journal Soil Science. Изд. Оксфордского Университета, июль 1956 г., т. 7, № 2, Лондон.
 ** Примечание: акр равняется около 0,4 гектара; англ. бушель—мера сыпучих тел—около 36,4 литра.

больше. Это обстоятельство авторы склонны объяснить тем, что в период сбора почвенных образцов опытные деланки были покрыты хорошим травостоем люцерны—*Medicago denticulata* и др. трав.

По данным авторов в деле формирования водопрочных агрегатов железо и алюминий существенной роли не играют и основным фактором, способствующим созданию структуры почвы является органическое вещество; в связи с этим почвы со сравнительно большим содержанием органических веществ отличаются и лучшей структурой. Кроме того авторы приходят к выводу, что высыхание и смачивание почвы, равно как выращивание растений (в данном случае речь идет о травах) с достаточной корневой системой способствуют улучшению физических свойств легких каштановых почв.

Наконец, цифровой материал данной работы показывает, что парование почвы в системе пар-пшеница приводит не только к потере азота и органических веществ, но и является основной причиной разрушения структуры почвы и уменьшения водопрочных агрегатов. Вот этим и объясняется то обстоятельство, что урожай пшеницы при этой системе обработки далеко уступает урожаю в ротации с люпином.

Как практический вывод Дроувер и Ньютон высказываются за более длительное пребывание в севообороте бобовых трав, что необходимо для значительного накопления в почве органических веществ, азота и улучшения физических свойств и, в результате всего этого, поднятия урожайности пшеницы.

Х. П. МИРИМАНЯН

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բիռնիգիկա, Գիգիտուգիա

62

- Հ. Գ. Դեմիրչոյյան, Գ. Թ. Աղունց, Ս. Մ. Ավագյան — Թաղիտակով
ճառագայթման ազդեցությունը աչքի ցանցաթաղանթի ֆունկցիայի վրա 3
- Գ. Հ. Փանոսյան — Այսպես կոչված «պոստոտեանիկ» ղեկավարությունը՝ հարցի
շուրջը 15

Միկրոբիոլոգիա

- Վ. Գ. Թումանյան — Ճառագայթասնկերի առողջոնիտակառն հատկությունների
նշանակությունը նրանց սխտեմատիկայի համար 25

Գենետիկա

- Հ. Գ. Բատիկյան, Գ. Պ. Չոլախյան — Եգիպտացորենը հայկական ՍՍՏԻ-ի
լեռնային շրջաններում 35
- Լ. Մ. Ավագյան — Տոմատի բարդ վեգետատիվ-սեռական հիբրիդներ 47
- Ե. Հ. Գեորգյան, Գ. Հ. Խաչատրյան — Բամբակի հումքի մի քանի քանա-
կական և որակական ցուցանիշների մասին՝ կապված կնդուդի աեղադրման
հետ 57
- Ֆ. Մ. Նուրաբյան — Տարբեր հասակում ձխախոտի վարսանդի փոշոսման ազդե-
ցությունը բեղմնավորման և սերնդի կենսունակության վրա 67

Համառոտ գիտական հաղորդումներ

- Փ. Կ. Մարկոսյան — Հայկական ղեղին և դորշ մեղունների բիոլոգիական որոշ
առանձնահատկությունները 75
- Տ. Ա. Ասմանյան — Լեռնային գետերի բակտերիալ ինքնամաքրման հարցի
շուրջը 83
- Ա. Կ. Սևոյան — Նոր տվյալներ առվույտի տերևային երկարակնճիթի և առ-
վույտի սերմնակերի պարադիտ միջատների մասին 91
- Ա. Ա. Սիմոնյան — Պաղատու ծառերի քլորոֆ հիվանդությունը և պայքարը
նրա դեմ 99

Արտասահմանյան գիտական գրականությունից

- Խ. Պ. Միրիմանյան — Տարբեր ցանքաշրջանառությունների ազդեցությունը
հողի և ցորենի բերքատվության վրա Արևմտյան Ավստրալիայում 103

СОДЕРЖАНИЕ

Стр.

Биофизика, физиология

- Г. Г. Демирчоглян, Г. Т. Адунц, Ц. М. Авакян—Действие радиоактивного фосфора на функциональное состояние сетчатки глаза 3
- Г. А. Паносян—К вопросу о так называемой „посттетанической декураризации“ 15

Микробиология

- В. Г. Туманян—Значение антагонистических свойств актиномицетов для их систематики 25

Генетика

- Г. Г. Батикян, Д. П. Чолахян—Кукуруза в горных районах АрмССР 35
- Л. М. Авалян—Сложные вегетативно-половые гибриды томатов 47
- Е. А. Геворкян, Г. А. Хачатрян—О некоторых количественных и качественных показателях хлопка-сырца в зависимости от местоположения коробочек 57
- Ф. М. Нубарян—Влияние опыления на оплодотворение и жизнеспособность потомства табака при различном состоянии рыльца 67

Краткие научные сообщения

- Ж. К. Маркосян—Некоторые биологические свойства местных и серых армянских пчел 75
- Т. А. Асмангулян—К вопросу о бактериальном самоочищении горных рек 83
- А. К. Устьян—Новые данные о паразитах насекомых люцернового листового слоника и люцернового семееда 91
- А. А. Симонян—Хлороз плодовых деревьев и борьба с ним 99

Из иностранной научной хроники

- Х. П. Мириманян—Влияние различных севооборотов на почвы и урожайность пшеницы в западной Австралии 103



Խմբագրական կոլեգիա՝ Դ. Խ. Աղաջանյան, Հ. Ս. Ազեայան, Ա. Դ. Արարատյան,
Հ. Դ. Բաթիկյան (պատ. խմբագիր), Հ. Բ. Բունյաթյան,
Գ. Ս. Դավթյան, Ա. Դ. Երիցյան, Ս. Մ. Կարապետյան,
Գ. Մ. Մարջանյան, Խ. Գ. Միրիմանյան, Ս. Ի. Քալանթարյան
(պատ. քարտուղար):

Редакционная коллегия:

А. С. Аветян, Г. Х. Агаджанян, А. Г. Араратян, Г. Г. Ба-
тикийн (ответ. редактор), Г. Х. Бунятин, Г. С. Давтян,
А. Г. Ерицян, С. И. Калантарян (ответ. секретарь), С. М.
Карагезян, Г. М. Марджанян, Х. П. Мириманян.

Տպագրվում է 2/1 1957 թ. Ստորագրվում է 11/III 1957 թ. ՎՖ 01892
Զեկ 1, ռզ. 1393, տրաժ 750, օբյեմ 9,25 ռ. ձ.

Տիպոգրաֆիա Իզդատելստվա Ակադեմիա ռաւկ Արմիւնսկոյ ՏՏՐ, Երեւան, ղլ. Աօւյանա, 124